ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀՈԳԵԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արթուր Նահապետյան
Եվրոպական կրթական ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ «Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը» վերտառությամբ 25-րդ հոդվածի 1-ին մասը ամրագրում է նաև, որ յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Հարկ է նշել, որ վերջինս ՀՀ Սահմանադրության նախկին խմբագրություններում ամրագրված չէր որպես ինքնուրույն իրավունք: 2005 թվականի խմբագրության մեջ ավելացվեց «անձնական» եզրույթը, բայց հոգեկան անձեռնմխելիությունը՝ որպես ինքնուրույն իրավունք, չնախատեսվեց: Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ հոգեկան անձեռնմխելիության իրավունքն արտացոլված է մի շարք ճյուղային օրենսդրական կարգավորումներում: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասն ընդհանուր բնույթի նորմ է ամրագրում, ըստ որի՝ հանցագործություն չի համարվում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ֆիզիկական կամ **հոգեկան հարկադրանքի** ազդեցությամբ, եթե դրա հետևանքով անձը չէր կարող ղեկավարել իր գործողությունները (անգործությունը): ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ **հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը**, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ:

Վերոնշյալ իրողություններով պայմանավորված՝ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջացել հայրենական իրավագիտության մեջ գիտատեսական քննարկման առարկա դարձնել հոգեկան անձեռնմխելիության իրավունքը՝ բացահայտելով վերջինիս բովանդակությունը կազմող բաղադրատարրերը:

Գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ հոգեկան ամբողջականության իրավունքը չի կարող առանձնացվել ֆիզիկական ամբողջականության իրավունքից, քանի որ մարդն ամբողջական, միասնական կենսահոգեբանական էակ է: Ֆիզիկական ամբողջականության իրավունքի ցանկացած խախտում ազդում է նաև հոգեկան ամբողջականության վրա, եթե նույնիսկ երբեմն դա ակնհայտ չէ[1]: Նախ անհրաժեշտ է նշել, որ քննարկվող իրավունքում կիրառվում է հոգեկան ամբողջականություն կամ հոգեկան անձեռնմխելիություն հասկացությունը, իսկ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում տեղ է գտել «անձեռնմխելիություն» եզրույթը, սակայն նշված երկու հասկացություններն էլ նույն բովանդակային ծանրաբեռնվածություն ունեն:

Բացի հոգեկան անձեռնմխելիությունից կամ հոգեկան ամբողջականությունից՝ իրավաբանական գրականության մեջ գործածվում է նաև «բարոյական անձեռնմխելիություն» եզրույթը, որն ունի նույն՝ հոգեկան անձեռնմխելիության բովանդա-

[1] Տե՛ս **A. Dascălu**, **A. Dumitrache,** *The Right to Physical and Mental Integrity*, http://www.journals.uab.ro/ index.php/auaj/article/viewFile/121/144, էջ 73:

կությունը[1]: Անհատի բարոյական անձեռնմխելիության ներքո նաև ընկալվում է անձի պատվի և արժանապատվության պաշտպանությունը[2]:

Երբեմն այդ անձեռնմխելիությունը կոչվում է նաև բարոյահոգեբանական[3] կամ բարոյական անձեռնմխելիություն: Կիրառվում է նաև հոգևոր անձեռնմխելիություն անվանում, որն ընդգրկում է անհատի ոչ նյութական բաղկացուցիչների առնչությամբ և տարածության մեջ անհատի տեղաշարժման ֆիզիկական սահմանափակումների հետ չկապված ոչ իրավաչափ ազդեցության արգելքները: Այն դիտարկվում է հետևյալ պահանջների տեսանկյունից՝ բարոյական անձեռնմխելիության, կամքի, մտքի և խոսքի ազատ դրսևորման խախտման անթույլատրելիությունը, անհատի կամքից անկախ կամ նրա կամքին հակառակ որևէ վարքագիծ դրսևորել ստիպելու նպատակով հոգեկան աշխարհի մտավոր, զգացմունքային, կամային և անգիտակցական ոլորտների վրա նպատակաուղղված ազդեցության արգելքը և այլն:

Այսպիսով, այստեղ խոսքը բարոյական անձեռնմխելիության, հոգեկան անձեռնմխելիության, խղճի և դավանանքի ազատության, մտքի և խոսքի ազատության, քաղաքացիությունից կամայականորեն զրկելու կամ փոխելու արգելքի և այլ խախտումների մասին է[4]:

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ հոգեկան անձեռնմխելիությունը պետք է դիտարկել որպես ոչ նյութական բարիք, իսկ վերջինս բաղկացած է ոչ նյութական բարիքների երեք խմբերից՝

ա) մարդկանց ֆիզիկական և հոգեկան բարեկեցությանը վերաբերող,

բ) մարդկանց ազատությանը (ինքնավարությանը) վերաբերող,

գ) մարդկանց անհատականացմանը վերաբերող[5]:

Ռ. Տիմեշովը նշում է նաև, որ ոչ նյութական բարիքների երկրորդ խմբի մեջ անհրաժեշտ է ներառել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, մարդու ազատությունը, իսկ վերջինս ընդգրկում է ոչ միայն գործողությունների, տարածության մեջ տեղաշարժվելու ազատությունը, մարդու մասնավոր կյանքի, մարմնի և հոգեկան գործունեության անձեռնմխելիությունը, այլ նաև ներքին աշխարհի, կարծիքների, մտքերի, հոգևոր (մշակութային) և աշխատանքային (ձեռնարկատիրական) գործունեության, խղճի, դավանանքի ազատությունը, այդ իրավունքների խախտման դեպքում՝ պաշտպանության դիմելու ունակությունը:

Անձի հոգեկան անձեռնմխելիությունն իրավաբանական գրականության մեջ ընկալվում է նաև որպես հոգեկան գործընթացների նորմալ ընթացք[6], այսինքն՝ արգելվում է մարդու հոգեկան վիճակին կամայական միջամտությունը: Ամենալայն իմաստով հոգեկան անձեռնմխելիությունը նշանակում է պետության և/կամ մասնավոր անձանց կողմից անհատի նկատմամբ ցանկացած հոգեկան հարկադրանքի

---

[1] Տե՛ս **Р.М. Хазиев** // *Право на психическую и нравственную неприкосновенность в уголовном процессе*. Мир юридической науки. – 2016, № 6, էջ 72:

[2] Տե՛ս **Е. Васильева**, *Проблемы ограничения неприкосновенности личности в уголовном процессе*: дис. … канд. юрид. наук. - Уфа, 2002, էջ 21:

[3] Տե՛ս **В. Смирнов,** *Права и свободы человека и гражданина, ограничиваемые при заключении под стражу в ходе уголовного судопроизводства: понятие и содержание* // Вестник Костромского государственного университета им Н.А. Некрасова. - 2012, № 1, Т. 18, էջ 374:

[4] Տե՛ս **Л. Казанцев,** *Принцип неприкосновенности личности и сфер ее жизнедеятельности в правовом регулировании общественных отношений*. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Нижний Новгород – 2004, էջ 18-19:

[5] Տե՛ս **Р. Тимешов**, *Нематериальные блага в гражданском праве и их защита*. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Краснодар- 2010, էջ 7-8:

[6] Տե՛ս **Е. Козлова, О. Кутафин**, *Конституционное право России*. М., Юрист, 2004. էջ 195:

դրսևորման անթույլատրելիություն[1]: Նեղ իմաստով հոգեկան անձեռնմխելիության տակ պետք է հասկանալ հակահիրավական հոգեկան հարկադրանքի անթույլատրելիությունը, այսինքն՝ հոգեկան բռնությունը[2]: Գիտական գրականության մեջ հարկադրանքն առավել հաճախ կապվում է մարդու կամքի հետ, երբ այն դիտարկվում է որպես «անհատական կամքի ինքնուրույնության ոչնչացում», այսինքն՝ մի անձի (հարկադրողի) կողմից այլ անձի (հարկադրվողի) վրա ազդեցություն այն նպատակով, որպեսզի վերջինիս ստիպի որևէ գործողություն իրականացնել (անգործություն դրսևորել) իր կամքին հակառակ[3]:

Մեկ այլ հեղինակի կարծիքով՝ հարկադրանքն անձի կամքի վրա այնպիսի ազդեցությունն է, որը նպատակ ունի անձի վարքագիծը համապատասխանեցնել հասարակության մեջ գործող նորմերին և կանոններին, իսկ ազդեցությունը կիրառվում է այդ նորմերով և կանոններով սահմանված կարգով, իսկ բռնություն ասելով պետք է հասկանալ այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են անձին ստիպելու կատարել որոշակի գործողություններ (դրսևորել անգործություն), որոնց կատարումն անձի համար չի համարվում պարտադիր, իսկ որոշ դեպքերում անձը պարտավոր է ձեռնպահ մնալ տվյալ գործողությունը կատարելուց (անգործությունը դրսևորելուց):

Հարկադրանքի մեջ հոգեբանական ազդեցության տակ պետք է հասկանալ մարդու հոգեբանության վրա տարբեր միջոցներով տեղեկատվական բնույթի ազդեցությունը, որը նրա մոտ առաջացնում է վախի զգացողություններ կամ հիպնոսային վիճակ, ինչը ճնշում է նրա կամքը և սահմանափակում է ազատ ինքնաարտահայտման ունակությունը:

Հարկադրանքի մեջ հոգեկան ազդեցության տեսակներ են սպառնալիքը և հիպնոսը: «Հոգեկան բռնություն» եզրույթը նույնական չէ «հոգեկան հարկադրանքին», քանի որ ենթադրվում է, որ բռնությունը կարող է լինել միայն ֆիզիկական: Հարկադրանքի մեջ առանձնացնելով հոգեբանական կողմը՝ նպատակահարմար կլինի խոսել հոգեբանական ազդեցության, այլ ոչ թե բռնության մասին[4]:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան անձեռնմխելիության իրավունքը խախտելու ունակ հարկադրանքը, որը չունի սոցիալական նորմերով այն կիրառելու հնարավորություն նախատեսելու տեսքով հիմնավորում, համարվում է բռնություն:

Հոգեկան հարկադրանքը կարող է դիտարկվել որպես հոգեկան անձեռնմխելիության սահմանափակման թույլատրելի տեսակ, եթե այն տեղավորվում է իրավական դաշտի շրջանակներում: Օրինական հոգեկան հարկադրանքի առավել տարածված տեսակների թվին սովորաբար դասվում են այնպիսի միջոցները, որոնք սահմանափակում են անհատի հոգեկան անձեռնմխելիությունը. նախապես ընտրված խափանման միջոցի պայմանները խախտելու դեպքում ավելի խիստ խափանման միջոց կիրառելու սպառնալիքը, վկային, տուժողին ցուցմունք տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ կեղծ ցուցմունք տալու համար պատասխանատվության մասին նախազգուշացնելը, անձնական խուզարկության ենթարկվելուց հրաժարվելու դեպքում հարկադրանք կիրառելու հնարավորության մասին նախազգուշացնելը և այլն: Մնացած միջոցները, որոնք նպատակ ունեն ան-

---

[1] Տե՛ս **А.Опалева**, *Институт личной неприкосновенности (теоретико-правовые проблемы).* Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, Москва – 2008, էջ 158:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 173:

[3] Տե՛ս **А. Каплунов**. *Об основных чертах и понятии государственного принуждения* // Государство и право. - 2004. - № 12. էջ 10:

[4] Տե՛ս **В. Зарипов**, *Физическое и психическое принуждение в уголовном праве: понятие, виды, ответственност*. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Москва-2007, էջ 7:

ձին դրդելու իր կամքին հակառակ իրականացնելու այս կամ այն գործողությունը, դիտարկվում են որպես հոգեկան բռնություն, որը խախտում է անձնական անձեռնմխելիությունը[1]: Հոգեկան բռնությունը կարող է իրականացվել նախևառաջ սպառնալիքի ցանկացած կերպ, ինչպես նաև վիրավորանքի և զրպարտության ձևով: Դրանք ունակ են ոչ միայն ճնշելու տուժողի կամքը, այլև նրան պատճառելու հոգեկան վնասվածքներ, որոնք անհատի առողջության համար երբեմն ոչ պակաս վտանգ են ներկայացնում, քան ֆիզիկական բնույթի վնասվածքները:

Հոգեկան բռնությունը հանցագործություն է մարդու հոգեկան անվտանգության դեմ՝ տուժողին ոչ իրավաչափ կերպով դիտավորյալ հոգեկան վնաս պատճառելու տեսքով:

Հոգեկան բռնության հանրորեն վտանգավոր հետևանք է հանդիսանում հոգեկան վնասը, որը մարդու զգացմունքային ոլորտի՝ բացասական հոգեկան իրավիճակների տեսքով վնասակար փոփոխությունների ամբողջությունն է: Հոգեկան վնասը տարանջատվում է չորս տեսակի՝ հանցավոր սպառնալիքի վերաբերյալ մտավախություն, հանկարծակի ծագած ուժեղ հոգեկան անհանգստության (աֆեկտ) վիճակ, բացասական զգացմունքային վիճակ, որը չի հասնում աֆեկտի աստիճանի, հոգեկան տառապանքներ[2]: Խնդրո առարկա իրավունքի համատեքստում սպառնալիքը՝ որպես հանցավոր վարքագիծ, տուժողի վրա հակահիրավական հանրային վտանգավոր տեղեկատվական ազդեցություն է: Ընդ որում նման արաքի քրեականացման հիմք է հանրորեն վտանգավոր և իրական սպառնալիքի ունակությունը խախտելու՝ մարդու հոգեկան անձեռնմխելիությունը և/կամ պատճառելու նրան հոգեբանական կամ առողջական այլ վնաս:

Այս կապակցությամբ հատկանշական է ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումն առ այն, որ սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Միևնույն ժամանակ, թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն առաջնայինն օբյեկտիվ իրադրության գնահատումն է[3]:

Հակահիրավական, հանրորեն վտանգավոր տեղեկատվական ոտնձգություն իրականացնելու կառուցակարգը այն է, որ խախտվում է անհատի հոգեբանական անձեռնմխելիությունը[4]:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը 1995 թվականի մայիսի 3-ի որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ ոչ միայն իրական սահմանափակումները, այլ նաև դրանց կիրառման բացահայտված վտանգը խախտում են անհատի անձեռնմխելիությունը, այդ թվում՝ հոգեբանական ճնշում են գործադրում մարդու գիտակցության և արարքների վրա: Դա ամբողջությամբ վերաբերում է նաև քրեական գործ հարուցելու որոշմանը, որը միշտ կապված է նման վտանգ ստեղծելու հետ, այդ թվում՝ անձին վկայից կամայականորեն կաս-

---

[1] Տե՛ս **А.Опалева**, նշվ. աշխ., էջ 159:

[2] Տե՛ս **Р. Шарапов**, *Насилие в уголовном праве: Понятие, квалификация, совершенствование механизма уголовно-правового предупреждения*. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук Екатеринбург-2006, досступно на сайте библиотеки юридических наук. Law Theses по электронному андресу http://lawtheses.com/nasilie-v-ugolovnom-prave:

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 08.06.2012 թ.-ի որոշումը քրեական գործ թիվ կդ1/0025/01/11 մասին:

[4] Տե՛ս **И. Лукьянова**, *Угроза как преступление в уголовном праве России*. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва – 2004, էջեր 10-11:

կածյալի վերածելու սպառնալիքի հետ[1]: Օրենսդիրը չի կարող մարդուն պարտադրել նմանատիպ ճնշմանը դիմանալու պարտականություն՝ նրան չտալով հնարավորություն օգտվելու դատական պաշտպանության իրավունքից:

Անօրինական քրեական գործ հարուցելու դեմ դատական պաշտպանությունը կարող է կանխել շահագրգիռ անձանց իրավունքների անհիմն սահմանափակումները, իսկ դատարանի մատչելիության բացակայությունը քննություն իրականացնող մարմինների համար հնարավորություն կստեղծի ազդեցության անօրինական մեթոդներ կիրառելու համար[2]: Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը յուրաքանչյուր մարդու երաշխավորում է, որ նրա ֆիզիկական, մարմնական ամբողջականությունը չի խախտվի, նա չի ենթարկվի ֆիզիկական և հոգեկան կտտանքների: Բացի դրանից, այն նաև ներառում է մարդու մարմնի և հոգեկան աշխարհի նկատմամբ առավել նվազ լրջության միջամտությունները. օրինակ՝ հոգեմետ դեղերով պարտադիր բուժումները, հոգեբուժական հարկադիր միջամտությունները, մարմնական ստուգումները և բժշկական այլ հարկադիր միջամտությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ հանրային ավելի բարձր շահերի պաշտպանության համար:

Այս իրավունքի գործնական նշանակությունը առավելապես դրսևորվում է բժշկության, կենսաբանության և տեխնոլոգիայի ոլորտի արդի զարգացումների համատեքստում՝ անհամաչափ միջամտությունից և վտանգներից անձին պաշտպանություն տրամադրելու առումով[3]: Թեև գիտական գրականության մեջ հոգեկան անձեռնմխելիության իրավունքի առնչությամբ տարբեր հասկացություններ են կիրառվում, ինչպես նաև այդ իրավունքին միջամտելու դեպքերը տարբեր կերպ են բնութագրվում, սակայն ընդհանուր հետևությունն այն է, որ հոգեկան անձեռնմխելիությունը հոգեկան գործընթացների նորմալ ընթացքն է:

ՀՀ Սահմանադրությունն արգելում է որևէ ձևով միջամտել այդ նորմալ ընթացքին, որը կարգավորվում է հակահիրավական, հանրորեն վտանգավոր տեղեկատվական բնույթի ազդեցության միջոցով: Սակայն այս իրավունքը բացարձակ իրավունք չէ, և որոշակի սահմանադրական արժեքների պաշտպանության նպատակով հոգեկան գործընթացների վրա հարկադրանք պարունակող իրավաչափ տեղեկատվական ազդեցությունը միանգամայն հնարավոր է և թույլատրելի:

Միջազգային իրավական փաստաթղթերում քննարկվող իրավունքը նույնպես տարբեր ձևակերպումներ է ստացել: Մասնավորապես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր մարդ ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք[4]: Դաշնագրում ամրագրված անձնական անձեռնմխելիության իրավունքը պաշտպանում է ֆիզիկական անձանց դիտավորյալ մարմնական վնասվածքներ և հոգեկան առողջությանը վնաս պատճառելուց՝ անկախ այն հանգամանքից՝ անձը գտնվում է անազատության մեջ, թե ոչ: Անձնական անձեռնմխելիության

---

[1] Տե՛ս **Постановление Конституционного Суда РФ от 3 мая 1995 г. N 4-П** "По делу о проверке конституционности статей 220.1 И 220.2 Уголовно-процессуального кодекса РСФСР в связи с жалобой гражданина В.А. Аветяна", Конституционный Суд Российской Федерации, http://ksportal.garant.ru:8081/ SESSION/PILOT/main.htm:

[2] Տե՛ս Особое мнение судьи Конституционного Суда РФ Т. Г. Морщаковой от 23 марта 1999 г. N 5-П http://ksportal.garant.ru:8081/SESSION/PILOT/main.htm:

[3] Տե՛ս **Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան,** *Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. Համառոտ պարզաբանումներ*: Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջ 48:

[4] Տե՛ս **Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր:** Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա(XXI) բանաձևով: Հասանելի է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում հետևյալ էլ. հասցեով՝ **http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500**:

իրավունքը մասնակից պետություններին պարտավորեցնում է պատշաճ միջոցներ ձեռք առնել, պաշտպանել մարդկանց կյանքին կամ ֆիզիկական անձեռնմխելիությանը սպառնացող վտանգներից: Մասնակից պետությունները պարտավոր են ձեռնարկել ինչպես ապագա վնասը կանխելուն միտված, այնպես էլ հետադարձ միջոցներ, ինչպիսիք են քրեական օրենսդրության կիրառման ապահովումը նախկինում պատճառված վնասի համար:

Այսպես, մասնակից պետությունները պարտավոր են պատշաճորեն արձագանքել այս կամ այն խմբի տուժողների նկատմամբ պարբերաբար բռնություն կիրառելու դեպքերին, օրինակ՝ իրավապաշտպաններին կամ լրագրողներին վախեցնելը, վկաների նկատմամբ վրեժի գործողությունները, կանանց նկատմամբ բռնությունը, այդ թվում՝ ընտանեկան բռնությունը, երեխաների և հաշմանդամների նկատմամբ բռնությունը, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հատկանիշով անձանց նկատմամբ բռնությունը և այլն: Սակայն անձնական անձեռնմխելիության իրավունքը չի ներառում ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը վերաբերող բոլոր ռիսկերը և չի առնչվում մարդու առողջության վրա անուղղակի ազդեցությանն այն դեպքերում, երբ անձը դառնում է քաղաքացիական կամ քրեական դատավարության օբյեկտ[1]:

Եվրոպական Միության հիմնարար իրավունքների խարտիայի[2] «Անձի ամբողջականության իրավունքը» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ հարգվի իր ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը: Այս դրույթի բովանդակությունից բխում է, որ մարդու ամբողջականությունը ներառում է ոչ միայն արտաքին ֆիզիկական չափանիշները, այլև նրա ներաշխարհը, հոգեկան ամբողջականությունը: Թեև հոդվածը չի ամրագրում տվյալ իրավունքի սահմանափակման ընդհանուր դեպքերը, այդուհանդերձ որոշակի գործողությունների արգելք ամրագրում է, որոնք առանցքային նշանակություն ունեն անձի ամբողջականության իրավունքը երաշխավորելու տեսանկյունից:

Հատկանշական է, որ տարբեր երկրների սահմանադրություններում տարբեր ձևակերպումներ են տրվում հոգեկան անձեռնմխելիության իրավունքին: Այսպես, Ռումինիայի Սահմանադրության 22-րդ հոդվածն ամրագրում է, որ մարդու կյանքի իրավունքը, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան ամբողջականության իրավունքը երաշխավորվում են[3]:

Սերբիայի Հանրապետության Սահմանադրության 25-րդ հոդվածով ամրագրվում է, որ ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունն անձեռնմխելի է[4]:

Սլովենիայի Հանրապետության Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը պետք է երաշխավորվի, քանի որ նա ունի մասնավոր կյանքի և այլ անձնական իրավունքներ[5]:

---

[1] Տե՛ս **Замечание общего порядка № 35, Статья 9 (Свобода и личная неприкосновенность),** Организация Объединенных Наций, Комитет по правам человека, 16 December 2014, http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2fPPRiCAqhKb7yhsrdB0H1l5979OVGGB%2bWPAXjdnG1mwFFfPYGIlNfb%2f6T%2fOE3Tt13ZSwvka7iWGvD2B%2f9eeOQPaa55YqUIQjkMBoUSiy00%2bcMzoUCHbZNIVhcW:

[2] Տե՛ս **EU Charter of Fundamental Rights**, European Union Agency for Fundamental Rights (FRA), http://fra.europa.eu/en/charterpedia/article/3-right-integrity-person:

[3] Տե՛ս **The Constitution of Romania** of 21 November 1991 (as Amended by Constitutional Revision Law No. 429/2003 of October 29, 2003), available http://www.cdep.ro/pls/dic/site.page?den=act2_2&par1=2#t2c2s0sba22:

[4] Տե՛ս **Constitution of the Republic of Serbia,** http://www.srbija.gov.rs/ cinjenice_o_srbiji/ustav_odredbe.php?id=218:

[5] Տե՛ս **Constitution of the Republic of Slovenia**, http://www.codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm:

Մոլդովայի Հանրապետության Սահմանադրության՝ «Կյանքի և ֆիզիկական ու հոգեկան ամբողջականության իրավունք» վերտառությամբ 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետությունը յուրաքանչյուր անհատի համար երաշխավորում է կյանքի և ֆիզիկական ու հոգեկան ամբողջականության իրավունքը[1]:

Հիշատակման է արժանի նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության հիմնական օրենքը, որի «Անձնական ազատություն» վերտառությամբ 2-րդ հոդվածի 2-րդ մասը երաշխավորում է յուրաքանչյուրի կյանքի և ֆիզիկական ամբողջականության իրավունքը[2]՝ առանց անդրադառնալու հոգեկան անձեռնմխելիության իրավունքին, սակայն նույն օրենքի՝ «Ազատությունից զրկելու իրավական երաշխիքները» վերտառությամբ 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազատությունից զրկված անձինք չպետք է ենթարկվեն հոգեկան կամ ֆիզիկական վատ վերաբերմունքի: Գրեթե նույնաբովանդակ դրույթներ են ամրագրված Իտալիայի Հանրապետության Սահմանադրության[3] 13-րդ հոդվածում, ըստ որի՝ անձնական ազատությունն անձեռնմխելի է, իսկ ցանկացած եղանակով ազատության սահմանափակման ենթարկված անձանց նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան բռնության ցանկացած գործողություն պետք է պատժվի:

Հոգեկան ամբողջականության իրավունքն առավել մանրամասն կարգավորում է ստացել Հարավաֆրիկյան Հանրապետության Սահմանադրության[4] մեջ, որի «Ազատությունը և անձնական անձեռնմխելիությունը» վերտառությամբ 12-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի մարմնական կամ հոգեկան ամբողջականության իրավունք, որը ներառում է հետևյալ իրավունքները.

ա) կայացնել վերարտադրության վերաբերյալ որոշումներ,

բ) պաշտպանել և վերահսկել իր մարմինը,

գ) չենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի առանց իր հստակ արտահայտված համաձայնության:

Տարբեր երկրների սահմանադրությունների վերլուծությունները ցույց են տալիս, որ թեև կիրառվող հասկացությունները ձևակերպումների տեսանկյունից տարբեր են, սակայն դրանք բոլորը վերաբերում են հոգեկան ամբողջականության երաշխավորմանը, որպեսզի հանրային իշխանությունները թույլ չտան հարկադրանք պարունակող տեղեկատվական բնույթի հակահիրավական ազդեցություն մարդու հոգեկան նորմալ գործընթացների վրա, և մարդը չզրկվի իր ներաշխարհին համապատասխան որոշումներ կայացնելու իրական հնարավորությունից:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) ուղղակիորեն չի ամրագրում հոգեկան անձեռնմխելիության կամ հոգեկան ամբողջականության իրավունքը, որը, սակայն, Կոնվենցիայի դրույթների բովանդակությունից դուրս է բերվել ՄԻԵԴ (այսուհետ նաև՝ Դատարան) դատական պրակտիկայի միջոցով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, քննելով փողոցային շներից հարձակման ենթարկված դիմումատուի գործը, նշում է, որ վերջինիս պատճառվել է ֆիզիկական և հոգեկան լուրջ տառապանք[5]: Սակայն դատարանն իր որոշումներում չի հստա-

---

[1] Տե՛ս **Constitution of the Republic of Moldova**, available http://www.presedinte.md/titlul2#2:

[2] Տե՛ս **Basic Law for the Federal Republic of Germany**, CODICES, the infobase on Constitutional Case-Law of the Venice Commission!, http://www.codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm

[3] Տե՛ս **Constituion of the Italian Republic**, CODICES, the infobase on Constitutional Case-Law of the Venice Commission!, http://www.codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm

[4] Տե՛ս **Constitution of the Republic of South Africa**, available http://www.justice.gov.za/legislation/constitution/SAConstitution-web-eng.pdf:

[5] Տե՛ս **Georgel and Georgeta Stoicescu v. Romania**, judgment 26 July 2011, final 26/10/2011, (paragraphs 7 to 10 above):

կեցնում, թե հոգեկան ամբողջականությունն անձին ինչ իրավունքներով է օժտում, թեև նշում է, որ ոչ բոլոր գործողությունները կամ միջոցները, որ բացասաբար են անդրադառնում հոգեկան ամբողջականության վրա, միջամտում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված մասնավոր կյանքը հարգելու իրավունքին: Սակայն Դատարանի դատական պրակտիկան չի բացառում, որ վերաբերմունքը, որը չի համապատասխանում 3-րդ հոդվածում նախատեսված դաժանությանը, կարող է, այնուամենայնիվ, խախտել մասնավոր կյանքին վերաբերող 8-րդ հոդվածը, եթե առկա է բավականաչափ բացասական ազդեցություն ֆիզիկական և հոգեկան ամբողջականության վրա[1]: Դաժանության նվազագույն աստիճանի գնահատումը հարաբերական է և կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են, օրինակ՝ վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական և հոգեկան հետևանքները և որոշ դեպքերում՝ տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը:

Բնական ճանապարհով ձեռք բերված ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունից առաջացող տառապանքները կարող են ներառվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում, եթե տառապանքը կամ դրա ռիսկերն ուժեղացել են վերաբերմունքի պատճառով, եթե տառապանքները բխում են ազատազրկման, աշխատանքից հեռացման կամ այլ միջոցների կիրառման պայմաններից, որոնց համար իշխանությունը կարող է կրել պատասխանատվություն[2]: Այս դիրքորոշմամբ Դատարանն էականորեն ընդլայնում է հոգեկան ամբողջականության բովանդակությունը, որի մեջ ներառում է ոչ միայն պետության անունից հանդես եկող սուբյեկտների կողմից անմիջականորեն իրավունքի խախտման արգելքը, այլ նաև այնպիսի վարքագիծը, որը թեև ուղղակիորեն միտված չի եղել հոգեկան ամբողջականության խախտմանը, սակայն նպաստել է այդ խախտումների կամ դրանց ռիսկերի ուժեղացմանը: Դատարանը բազմիցս նշել է, որ «մասնավոր կյանքը» լայն հասկացություն է, որը ենթակա չէ սպառիչ բնորոշման: Հոգեկան առողջությունը նույնպես պետք է դիտարկվի որպես մասնավոր կյանքի առանցքային մաս՝ կապված հոգեկան ամբողջականության տարրի հետ: 8-րդ հոդվածը պաշտպանում է ինքնության և անձնական զարգացման իրավունքը, մարդկանց ու արտաքին աշխարհի հետ հարաբերությունները զարգացնելու իրավունքը:

Հոգեկան կայունության պահպանումն այդ տեսանկյունից պարտադիր նախապայման է մասնավոր կյանքը հարգելու իրավունքից արդյունավետորեն օգտվելու համար[3]: Սակայն հոգեկան առողջությունը հոգեկան անձեռնմխելիության միակ տարրը չէ: Ճանաչողական ազատության իրավունքը, որը լայնորեն քննարկվում է իրավաբանական գրականության մեջ, անհատներին տալիս է ազատ և համապատասխան որոշումներ կայացնելու իրավունք, որոնք առնչվում են նյարդատեխնոլոգիաների կիրառությանը: Հոգեկան անձեռնմխելիության իրավունքն անհատներին պաշտպանում է առանց երրորդ անձանց համաձայնության ուղեղի առկա տեղեկատվական դաշտ ներխուժումից, ինչպես նաև այդ տեղեկատվությունն անօրինական հավաքելուց: Անօրինական օգտագործման նման հնարավորությունները պետք է ստիպեն վերաիմաստավորել և նորովի դիտարկել հոգեկան ամբողջականության իրավունքը, որը միջազգային իրավունքը ճանաչել է հոգեկան առողջության իրավունք: Վերջինս պետք է պաշտպանի մարդուն ոչ միայն հոգեկան հիվանդությունից, այլ նաև նյարդատեխնոլոգիաների ոչ ճիշտ կիրառման միջոցով նրանց նյարդային գործունեության[4] վրա անօրինական և վնասակար ազդեցություններից:

---

[1] Տե՛ս **Costello-Roberts v. the United Kingdom**, judgment of 25 March 1993:

[2] Տե՛ս **N. v. The United Kingdom,** Judgment, 27 May 2008:

[3] Տե՛ս Bensaid v. The United Kingdom, Judgment, 6 February 2001, Final 6 May 2001:

[4] Տե՛ս **Ն. Հակոբյան, Ա. Հակոբյան, Հ. Բակլավաջյան,** *Բարձրագույն նյարդային (հոգեկան) գործունեություն*: Ռեսուրսնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2005, **Մ. Նադիրյան**, *Նյարդաֆիզիոլոգիա և բարձրագույն նյարդային գործունեություն*: Մանկավարժ, Երևան - 2008:

Վերջապես՝ հոգեկան շարունակականության իրավունքը կարող է պահպանել մարդկանց անհատական ինքնությունը և պաշտպանել նրանց հոգեկան կյանքի շարունակականությունը երրորդ անձանց կողմից առանց համաձայնության արտաքին փոփոխությունների ենթարկելուց:

Հոգեկան շարունակականությունը կարևոր հիմնախնդիր է ազգային անվտանգության տեսանկյունից, որտեղ անհատին փոխելու պարտադիր միջամտությունները պետք է արդարացվեն կարևորագույն ռազմավարական նպատակներով[1]:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք ամրագրել հետևյալ եզրահանգումները:

- Թեև գիտական գրականության մեջ հոգեկան անձեռնմխելիության իրավունքի առնչությամբ տարբեր հասկացություններ են կիրառվում, ինչպես նաև այդ իրավունքին միջամտելու դեպքերը տարբեր կերպ են բնութագրվում, սակայն ընդհանուր հետևությունն այն է, որ հոգեկան անձեռնմխելիությունը հոգեկան գործընթացների նորմալ ընթացքն է, որին ՀՀ Սահմանադրությունն արգելում է որևէ ձևով միջամտել, ինչը տեղի է ունենում տեղեկատվական բնույթի ազդեցության միջոցով: Սակայն այս իրավունքը բացարձակ իրավունք չէ, և որոշակի սահմանադրական արժեքների պաշտպանության նպատակով հոգեկան գործընթացների վրա հարկադրանք պարունակող իրավաչափ տեղեկատվական ազդեցությունը միանգամայն հնարավոր է և թույլատրելի:
- Տարբեր երկրների սահմանադրությունների վերլուծությունները ցույց են տալիս, որ թեև ձևակերպումների տեսանկյունից կիրառվող հասկացությունները տարբեր են, սակայն դրանք բոլորը վերաբերում են հոգեկան ամբողջականության երաշխավորմանը, որպեսզի հանրային իշխանությունները թույլ չտան հարկադրանք պարունակող տեղեկատվական բնույթի հակահիրավական ազդեցություն մարդու հոգեկան նորմալ գործընթացների վրա, և մարդը չզրկվի իր ներաշխարհին համապատասխան որոշումներ կայացնելու իրական հնարավորությունից:
- Հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը պետության կողմից ճանաչված և երաշխավորվող իրավունքների ամբողջություն է, որն անձին հնարավորություն է տալիս իր զարգացվածության, կրթվածության, պատկերացումների հիման վրա առանց հարկադրանք պարունակող հակահիրավական որևէ արտաքին ազդեցության զարգացնել իր հոգեկան աշխարհի մտավոր, զգացմունքային, կամային և գիտակցական ոլորտները, ձևավորել սեփական ինքնությունը, հաստատել և զարգացնել հարաբերություններ այլ մարդկանց ու արտաքին աշխարհի հետ: Այս իրավունքի առանցքն է կազմում մարդու կողմից ձևավորված և գիտակցված կամքը:
- Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի արդյունավետ իրացումը սերտ կապված է նաև այլ հիմնական իրավունքներից արդյունավետորեն օգտվելու իրական հնարավորության հետ, միաժամանակ հոգեկան անձեռնմխելիության իրավունքն անձին չի պաշտպանում իր հոգեկան աշխարհի վրա հարկադրանք պարունակող իրավաչափ տեղեկատվական ազդեցություններից:
- Հոգեկան անձեռնմխելիության իրավունքը ենթադրում է պետության պարտականությունը՝ երաշխավորել, որպեսզի ո՛չ հանրային իշխանության անունից հանդես եկող սուբյեկտները, ո՛չ այլ անձինք տեղեկատվական բնույթի հոգեկան հարկադրանքի օգնությամբ անձին չստիպեն հրաժարվել իր կողմից ձևավորված և գիտակցված անհատական կամքից:

---

[1] Տե՛ս **Marcello Ienca**, *Do We Have a Right to Mental Privacy and Cognitive Liberty?,* https://blogs.scientificamerican.com/observations/do-we-have-a-right-to-mental-privacy-and-cognitive-liberty/#:

НЕКОТОРЫЕ СООБРАЖЕНИЯ О КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОМ СОДЕРЖАНИИ ПРАВА НА ПСИХИЧЕСКУЮ НЕПРИКОСНОВЕННОСТЬ

Артур Наапетян
Аспирант кафедры права Европейской образовательной академии

В статье был представлен ряд актуальных вопросов, касающихся содержания права на психическую неприкосновенность в свете различных правовых актов, теоретических источников и практики высших судебных органов некоторых государств.

Принимая во внимание правовые позиции Европейского суда по правам человека, были затронуты позитивные обязанности государства в этой области, которые имеют ключевое значение для раскрытия содержания права на психическую неприкосновенность. На основе анализа были сделаны некоторые теоретические обобщения и представлены научно-исследовательские рекомендации.

SOME CONSIDERATIONS ON THE CONSTITUTIONAL-LEGAL CONTENT OF THE RIGHT TO PSYCHIC IMMUNITY

Artur Nahapetyan
PhD student at the Law Department of the European Educational Academy

In the article have been presented a number of topical issues regarding the content of the right of physical immunity in the light of various legal acts, theoretical sources and the practice of the supreme judicial bodies of some states.

Taking into account the legal positions of the European Court of Human Rights, it was touched upon the positive responsibilities of the state in this area, which have key importance for the disclosure of the content of the right to physical immunity. Based on the analysis have been made some theoretical generalizations and presented scientific-researched recommendations.

Բանալի բառեր – *հոգեկան անձեռնմխելիություն, հոգեկան ամբողջականություն, բարոյական անձեռնմխելիություն, հարկադրանք, հոգեբանական բռնություն, սպառնալիք*
Ключевые слова: *психическая неприкосновенность, психическая целостность, моральная неприкосновенность, принуждение, психологическое насилие, угроза*
Key words: *physical immunity, physical integrity, moral immunity, coercion, psychological violence, threat*